որոյ սահմաններն են՝ հարաւից ծովափը, արեւելքից Միքայէլեան փողոցը, հիւսիսից պարիսպը և արեւմուտքից Յակոբ Սարգսեանի տունը՝ Կարապետ Լալայեանի տան հանդէպ։ Սոյն թաղի մէջ է մտնում նաեւ ամբողջ Շամախւոյ թաղը, հետեւեալ սահմաններով — հարաւից Թաւաքալեանցի և Տէր Սիմէօնեանցի տների մէջ եղած լայն փողոցը իւր ամբողջ երկայնութեամբ, արեւելքից մալականների աղօթարանի շարքի քամակը, այսինքն մինչեւ Աղասի բէկ Ասլանեանի տան շարքը (այդ կարգը Տէր Գրիգորինն է), հիւսիսից Շամախւոյ թաղի վերջին սահմանը և արեւելքից մինչեւ այն թաղի ծայրը։ Վերոգրեալ թաղերը յանձնուեցան սինոդից ժամանակաւոր նշանակած Մեսրովբ քահանայ Տէր Ոսկանեանցի հովուութեանը, մինչեւ այս թաղականք իրենց սեպհական քահանայ ընտրելը։

Երրորդ թաղը կազմում է Ա. Կազամաթի շուրջը՝ հետեւեալ սահմաններում. արեւելքից Բազարի փողոցը, արեւմուտքից Պարսկական փողոց (Տէր Խորէնի փողոց), հարաւից Նիկոլայեւսկի փողոց, իսկ հիւսիսից ռուսաց նորաշէն եկեղեցւոյ փողոցը։ — Բ) Ցիցեանովի և Հայոց զուգահեռական երկու փողոցներն, որ սկըսվում է Յակոբ Լալայեանի տնով և վերջանում է Ղուբի հրապարակով, և Գ.) սպիտակ և սեւ քաղաքները, որոյ արեւելեան սահմանը վերջանում է այն կամուրջի մօտ, որոյ վրայից անցնում է սեւ քաղաքի երկաթուղին։ Սոյն թաղը յօժարակամ ընդունեց Խորէն աւագ քահանայ Միրզաբէկեանցը։

Չորրորդ թաղը սկսվում է ծովափից, թուրքի քարվանսարայից (ուր Յապետ Տէր Յակոբեանցի տունը) ու մէկ կողմից Միքայէլեան փողոցի աջ կողմը և միւս կողմից Պոլիցեսկի փողոցի ձախ կողմը ընդունելով գալիս մտնում է Հայոց փողոցը, աջկողմից բարձրանալով մինչեւ ովդանը, ապա ծռվելով դէպի աջ Մարդանեանցի տան վերեւից՝ մտնում է Վարանցովի փողոցը և բարձրանալով Շամախւոյ թաղը և Աղասի բէկ Ասլանեանցի տան շարքը ընդունելով իւր մէջ, ցածրանում է Մէլքոն Շահգիտանեանցի փողոցը ու ամբոցջ պրիուտը իւր մէջ ընդունելով՝ Յովհաննէս բէկ Տէր Գասպարեանցի տան փողոցով՝ և իջնում է ցած մինչեւ Սաղիանցի տունը, և ապա մտնում Կոլի բաղնիսի փողոցը